

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ԳԱՌՆՈՒԿԸ

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԽԱՂ ՄԷԿ ԱՐԱՐՈՎ

[ՇԻՆՈՒՄՆԵ ԳՊՐՈՅՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ]



Հրատարակիչ՝ ՅԱԿՈԲ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Պատր Ալի, Բեհա Էճ. խան

Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. «ԹԵՂԵՒԱՆ»

1930

891.995

Կ-31

891 995
Կ-31

2011-07
9

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ԳԱՌՆ ՈՒ ԿԸ

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԽԱՂ ՄԷԿ ԱՐԱՐՈՎ

[ՇԻՆՈՒԱԾ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ]



Հրատարակիչ՝ ՅԱԿՈԲ ԱՔՐՍՀԱՄԵԱՆ

Պատր Ա.Ի, Բեթե ԷՃ. Խան

Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. «ԹԻՈՂԻԼԱԹ»

1930

Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ Ը

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ե Ր

Միմանեան.— Յայտնի գիտնական մանկավարժ մը:

Տնօրէն դպրոցի.

Դպրոցներու քննադատը տեսուչը.

Օրիորդ Հայկանոյւ.— Վարժունի

Օրիորդ Սիրանոյւ.— »

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Սուրեն
Արամ
Կարապետ
Արսէն
Վազգէն
Հմայեակ
Վահան

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ

Նուարդ
Մարիամ
Վարդունի
Տիգրանունի

Դպրոցի Ծառան, 20ի չափ առակերտ-առակերտունիներ

Բոլոր դերերը պիտի կատարեն անուշ առակերտները: Առաջին երեք դերերը պիտի տրուին ամենէն հասակաւորներուն, ինչպէս եւ Օրիորդ Հայկանոյւի դերը:

Անցքը կը կատարուի քաղաքին նախակրթարանի մը մէջ:

(Նիւթը քաղուած է Լեւոն Ֆրապիյի «Մարկոս» գրուածքէն):



4427 - 72

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս բանտարանը առաջին անգամ դրուեցաւ Պուրեքի բեմին վրայ, 1913 Յունուար 7ին: Դերակատարները, առանց բացառութեան, ազգային վարժարանի Ա.էն մինչեւ Դ. կարգի առակերտ-առակերտունիներէն ընտրուեցան ու մեծ յաջողութեամբ ու ըմբռնումով ներկայացուցին:

Ամենէն դուռար դերերն են Միմանեանի եւ Օրիորդ Հայկանոյւի: Այս վերջինս կամ լաւ եւ արագ գծագրել պիտի գիտնայ եւ կամ նախապէս, գրասխանակին վրայ, կարմիր մատիտով մը, գծագրողի մը պիտի նկարել տուի խաղին մէջ յիշուած ամբողջ նկարը:

Խաղի ժամանակ դերակատարը կաւիճով կարմիր գծերուն վրայէն պիտի նկարէ, եւ ըստ իրեն պատմածին, հետզհետէ երեւան պիտի բերէ ամբողջ նկարը:

Անհրաժեշտ է առ հասարակ շարժում եւ աշխոյժ դնել ամբողջ խաղին մէջ: Շա՛ս պիտի տուէ ներկայացումը, երբ օրիորդ Հայկանոյւի պատմածը, օրինակ, ըլլայ դանդաղ, միայն շարժումով, եւ երբ նա չը գծագրէ լայն շարժումներով ու արագ, շնչառութիւնները կարճա՛սեւ:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Պուրեք, 1913, Ապրիլ

ԴԱՍԱՐԱՆ: Տասնի չափ փոքրիկ ու քերել, երկու
սեղով նստաբաններ. գրասխասակ ձախ կողմի խորհին
անկիւնը, քիչ մը առաջ՝ ուսուցչի սեղանը եւ արուր:
Դասարանի պատերու վրայ իրազնական նկարներ:

Քսան աշակերտ-աշակերտուհի, 7-12 տարեկան,
սօնական հագուստներով, աղփաթիկ եւ հնամառ: Մաքուր
եւ կոկիկ սանճուած:

Նստած, կանգնած, խումբեր կազմած՝ կը խօսակ-
ցին խառն ի խառն: Դասարանը այն վիճակի մէջ է,
երբ դասը սկսելու զանգը զարնուած է, սակայն ու-
սուցչունին կ'ուշացայ գալու:

Դրան մօտ են քանի մը տղայ-տղջիկ: Տիգրանունին
զլուխը կիսաբաց դնեն դուռն հանած՝ կը նայի:

Ա.

ՍՈՒՐԻՆ.— (Նստած սեղեն) Չե՞ն երեւար, Տիգ-
րանունի... (*) Այս ի՞նչ է, օրիորդն քալ դասի չեկաւ:

ՀՄԱՅՆԱԿ.— (Կ'երբայ դեպի գրասխասակը) Գրե՛մ
ուրեմն աշտեղ, թէ օրիորդը ուշացաւ հինգ վայրկեան:

ՍՈՒՐԻՆ.— Է՛յ, չաղտոտես, հի՛մա մաքրեցի:

ԱՐԱՄ.— Եւ ատկէ զատ՝ հինգ րոպէ ալ չէ անցած:

ՎԱԶԳԻՆ.— Տա՛սն ալ պիտի անցնի. հիւրը եւ
կած է երեւի և ամէնքը անով կ'զբաղին...

ՄԱՐԻԱՄ.— Ի՞նչ կը կարծէք, տղա՛ք, եկող հիւ-
րը երիտասարդ պիտի ըլլայ թէ ծեր:

ՀՄԱՅՆԱԿ.— Ծե՛ր պիտի ըլլայ:

ԿԱՐԱՊԵՏ.— Երիտասարդ պիտի ըլլայ:

ՆՈՒԱՐԴ.— Երիտասարդ և բարձրահասակ:

ՍՈՒՐԻՆ.— (Մաղբիլով) Օ՛, բարձրահասակ...
Կարծես տեսած է... Իսկ ես կ'ըսեմ, որ կարճահասակ
է, նիհար և քիչ մըն ալ կուզ:

ՆՈՒԱՐԴ.— Դուն ի՞նչ գիտես որ. տեսած ես:

ՍՈՒՐԻՆ.— Չեմ տեսած, բայց գիտեմ: Բոլոր նշա-

նաւոր մարդիկ գիտնական, վարժապետ կամ դրող—
կ'ըլլան նիհար, մէջքերնին ծռած, սապատող...

ՀՄԱՅՆԱԿ.— Մէջքը ծռու ըլլալը՝ չի՛ նշանակե-
ր սապատող են: Հայրիկս կ'ըսէ թէ մէջքի ծռութեւ-
նը շատ աշխատեղէն կ'ըլլայ... Եւ յետոյ, ես տեսած
եմ նշանաւոր մարդ մը, որու ո՛չ մէջքն է ծռու, ոչ
ալ ինքը նիհար:

ԱՐԱՄ.— Չես տեսած, կը պարծենաս:

ՀՄԱՅՆԱԿ.— Տեսած եմ. կիրակի օրը տեսայ,
պարտէզին մէջ ցուցուցին ինծի:

ԱՐԱՄ.— Ո՛վ ցուցուց, ոստիկա՞նը:

ՀՄԱՅՆԱԿ.— Ո՛չ, հայրիկս:

ՍՈՒՐԻՆ.— Ա՛հ, հայրիկդ... Յետոյ, ալ ի՞նչ
ըսաւ այդ հայրիկդ:

ՀՄԱՅՆԱԿ.— (ճեղացած) Հայրիկս կը սիրէ միշտ
լաւ բաներ ցոյց տալ ինձ.— «Նայէ՛, ըսաւ, աս մեծ
մարդ մըն է»...

ՆՈՒԱՐԴ.— Բարձրահասակ էր:

ՍՈՒՐԻՆ.— Գլուխն այս առաստաղին կ'հասնէ՞ր:

ԿԱՐԱՊԵՏ.— Կոնքը գերանի չափ կայի՞ն:

ՎԱԶԳԻՆ.— Ատամները ուրազի նման էին:

ԿԱՐԱՊԵՏ.— (ոսփի ելած՝ կ'արտասանէ)

«Քիթը կորնթարթ, ինչպէս մի բլուր

«Ատամներն ուրազ, եղունգները թուր»...

ՍՈՒՐԻՆ.— (նոյնպէս ոսփի, աւելի բարձրաձայն)

«Կուրծքը կասեմս մի լա՛նջ էր լեռան.

«Մէջքը սարածայր(»...

ՎԱԶԳԻՆ.— (վրայ տալով)... «Կոնքը գերան»...

ՀՄԱՅՆԱԿ.— Դուք յիմա՛ր էք... մեծ որ կ'ըսեն,
չի՛ նշանակեր Տորք-Անդեղի պէս հսկայ մը... Հայրիկս
կ'ըսէ թէ մարդ մեծ կ'ըլլայ ո՛չ թէ իր հասակովը

(*) Դ. Աղայեանի «Տարբ Անգեղ» դիւցազներգութեան:

(*)... այս կէտերը կը ցուցնեն ռաս փոքրիկ ճշտութիւն մը:

այլ իր խելքովը ու գիտցածներովը... Տեսած մարդս
գիտնական մըն էր, շատ բան հնարած, շատ գրքեր
գրած...

ԿԱՐԱՊԵՏ.— Հայրիկդ ըսաւ:

ՀՄԱՅԵԱԿ.— (բարկացած՝ կ'ուզէ դեպի նա երթալ)
Դո՞ւն ալ սկսար ծաղրել:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ.— (Դրան փոքր ետ կը փառնուի եւ
կը վազէ իր սեղը) Կուգան... տեղերնի՛դ...

(Ամենք շտապով կը նստին)

ՍՈՒՐԷՆ.— (նստած սեղին) Հիւրը տեսա՞ր... ծե՞ր էր:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ.— Չը տեսայ... Տնօրէնը և օրիորդը
տեսայ թէ չէ՝ ևս քաշուեցայ:

ԿԱՐԱՊԵՏ.— Սպասեցէք, որ ստուգեմ... (կ'ուզէ
ելնել եւ դեպի դուռը երթալ):

ԱՐԱՄ.— Նստէ ծո՛ւ... յանկարծ դուռը երեսիդ
կը բացուի և կը խայտառակուիս:

ՎԱԶԳԷՆ.— Տղա՛ք, եկէք բոլորովին լուռ մնանք և
ցոյց տանք որ մեր դասարանը գիտէ հիւր ընդունիլը:

ԿԱՐԱՊԵՏ.— Մ... ճիշդ է, լուռ մնանք...

ՎԱԶԳԷՆ.— Ոտնաձայներ կը լսուին արդէն:

ՍՈՒՐԷՆ.— Սրտիդ բարձրացնէ և այն... (լուռ) Ահա
այժմ դուռը պիտի բացուի և մէյ մըն ալ տեսնես տնօրէն
նը ներս պիտի մտնէ արագ քայլերով, գէմքը խիստ,
ասանկ... (կ'ելլէ եւ կը ձեռնարկէ) «Հը՞, ի՞նչ կ'ընէք,
խելօք նստած էք, հիւրի՞ն կը սպասէք... Այդ ի՞նչ
է, կարա՛պետ, դարձեա՛լ քիթդ մաքուր չէ... Իսկ
աս ի՞նչ թուղթի կտորներ են յատակին վրայ»... Բա
սենք որ՝ ոչ մի կտոր թուղթ չը կայ այսօր... (գետն
նի վրայ կը նայի) նստարաններու տակն ալ չը կայ...
(կը զննէ):

ԱՐԱՄ.— Կարապետի քիթն ալ մաքուր է այսօր...

ՍՈՒՐԷՆ.— (կը շարունակէ միտք տեսնելը ձեռնարկելով)...
«Ձեռքերնիդ նայիմ... հա՛, գէշ չէ, մաքուր է կար-

ծես»... Բայց ո՛չ, պարո՛ն տնօրէն, «կարծես» բառը
աւելորդ է, որովհետեւ այսօր ամէնքիս ձեռքերն ալ
մաքուր են... նոյնիսկ իմիններս... (իւր ձեռքերուն
կը նայի):

ՄԱՐԻԱՄ.— Ձեռքերուն օրիորդը կը նայի և ո՛չ թէ
տնօրէնը... Ա՛յ, կուգայ ասանկ, իր կաքաւի քայ-
լերովը... (կը սկսի ձեռնարկել) Կ'անցնի նստարաննե-
րու առջեւէն... «Նայի՛մ, ցո՛յց տուր... այդպէս
չըլար, սիրելիս, աղտո՛տ է, բարեկամս»...

ՆՈՒԱՐԴ.— Է՛յ, Մա՛րիամ, օրիորդը՞ կը ծաղ-
րես, կեցիր ըսեմ մէյ մը:

ՄԱՐԻԱՄ (փչ մը կոտրուած՝ կը նստի սեղը) Բնա՛ւ ալ
չեմ ծաղրեր, կը ձեռնարկեմ միայն, ի՞նչ կ'ըլլայ որ...

ՀՄԱՅԵԱԿ.— Ծ՛շշ, լոկէ՛ք, եկան... Դուռը
հիմա պիտի բացուի...

ԱՄԷՆ ԿՈՂՄԷՆ.— Ծ՛շշ... Մա՛ս... լոկէ՛ք...
(Դուռը կը նուցէ, բայց վայրկեան մը դեռ չի բացուիր):

Բ.

ՆՈՅՆՔ, ՏՆՕՐԷՆ, ՕՐԻՈՐԴՆԵՐ ՍԻՐԱՆՈՅՇ ԵՒ
ՀԱՅԿԱՆՈՅՇ (կը մտնեն. առակերտները անմիջա-
պէս՝ ոտքի կ'ելլան)

ՏՆՕՐԷՆ.— (Ամենք առաջ, արագ քայլերով կ'երթայ
դեպի նստարանները) Հա՛, հիւրի՞ն կը սպասէք... Լա-
ւ է, գոհ եմ, որ խելօք էք... Հապա, մէկ նայիմ, ա-
մէնքդ ալ մաքո՞ւր էք... Հիւրը չեկաւ դեռ, բայց
ամէն լոկէ կ'սպասենք իրեն... Իսկ, դո՛ւ, Կարա-
պետ, մաքո՞ւր է այսօր քիթդ... Հա՛, լաւ է, մաք-
րած ես, ամօթ պիտի ըլլար, եթէ հիւրին աչքը քի-
թիդ հանդիպէր... (ընդհանուր ծիծաղ) Իսկ գիտէ՞ք,
տղա՛ք, թէ ո՞վ է այն պարոնը, որ այսօր պիտի այ-

ցելէ մեզ... Չը գիտէք անշուշտ. ես բացատրեմ... Այդ պարոնը գիտնական մըն է, չատ նշանաւոր մարդ մը, որ պիտի այցելէ՝ ամբողջ աշխարհի գլոխաւորը: Ան տեսեր է կամ պիտի տեսնէ թէ՛ Եւրոպայի և թէ՛ Ասիայի բոլոր մանուկները. թուրք հայ, ռուս... նոյնիսկ չինացի փոքրիկները, այո՛... իսկ գիտէ՞ք թէ ինչո՞ւ այդպէս կը ձամբորդէ և կ'այցելէ գլոխաւորները... որպէսզի գիտնայ թէ աշխարհիս ո՞ր երեսաներն են ամէնէն խելօքները... դէ՛հ ուրեմն, դո՛ւք գիտէք... Եթէ կ'ուզէք որ դուք եղած ըլլաք ամբողջ աշխարհիս առաջին խելօք մանուկները, ձեզ պիտի պահէք հնար եղածին չափ հանդարտ ու համեստ... Չարութիւն մի՛ ընէք, մի՛ գոգոռաք, եղէք քաղաքավար ու վայելուչ: Այն ժամանակ պարոնն ալ պիտի յայտնէ ամենուն, թէ ինքը ո՛չ մէկ տեղ տեսած չէ այսպէս սիրելի, հնազանդ և օրինակելի մանուկներ, ինչպէս այստեղ... Եւ երբ անոր հարցնեն թէ աշխարհիս վրայ ո՞ր մանուկներն են ամէնէն խելօքները, առանց շուարեւու պիտի ըսէ. — «Է՛հ, չը գիտէ՞ք, ի՛նչ... ի հարկէ այս ինչ գլոխաւոր մանուկները, այս ի՛նչ երկրի մէջ, այս ինչ տեղը»...

ՍՈՒՐԷՆ.— (մատը կը բարձրացնէ) Իսկ, պարոն, այդ նշանաւոր մարդը երիտասարդ է թէ ծեր:

ՏՆՕՐԷՆ.— (զարմացած) Ինչո՞ւ կը հետաքրքրուիս... կարծեմ ծեր պիտի ըլլայ... Ես ի՛նքս ալ դեռ տեսած չեմ...

ՍՈՒՐԷՆ.— (դառնալով Նուարդին) Տեսա՞ր... Ես գիտէի... նշանաւոր մարդիկ ծեր կ'ըլլան և նիհար...

ՀՄԱՅԵԱԿ.— Մէջքերնին ալ ծռած...

ՏՆՕՐԷՆ.— Ինչպէ՛ս... ի՛նչ կ'ըսէք... ի հարկէ, նշանաւոր մարդիկ մեծ մասամբ ծեր կ'ըլլան... Նշանաւոր ըլլալու համար՝ երկա՛ր պէտք է աշխատիլ, չա՛տ տասնեակ տարիներ... Նիհար ալ են, որովհետեւ գիր-

նալու մասին չե՛ն հողար, կը մոռնա՛ն իրենց անձը...

ՀՄԱՅԵԱԿ.— Բայց ես տեսած եմ նշանաւոր մարդ մը, պարոն, որ ինքը դեռ ծեր չէ և նիհար ալ չէ...

ՏՆՕՐԷՆ.— Այո՛... կ'ըլլայա՛տ ալ. առողջ կ'ըլլան, լաւ կը պահպանեն ինքզինքնին... Սակայն այդ մասին ուրիշ անգամ... Եւ յետոյ, գիտէ՞ք, դուք դեռ տղայ էք, այդ տեսակ բաներու մասին մտածելու պէտք չէք...

Գ.

ՆՈՅՆԻ ԵՒ ԴՊՐՈՅԻ ԾԱՌԱՆ

ԾԱՌԱՆ.— (կ'երեւայ դրան շեմքին վրայ) Պարոն անօրէն...

ՏՆՕՐԷՆ.— Ի՞նչ է, ի՞նչ կայ, Սարգիս:

ԾԱՌԱՆ.— Ընդհանուր տեսուչը մարդ դրկած է և կը խնդրէ որ անմիջապէս իր գրասենեակը երթաք:

ՏՆՕՐԷՆ.— Շատ լաւ, երթամ, երեւի հիւրը եկեր է... Դէ՛հ, տղաք, խելօք կեցէք... (օրհորդներուն) Կանուխ է դեռ տղաքը նստեցնել այսպէս. թող ելնեն դուրս խաղան. երբ հիւրը գայ, զանգ կը զարնենք և կը ժողվուին... Ապա՛, տղաքս... դուրս ելէք նա՛յ մ... սակայն չաղտոտիք...

ԱՀԱԿԵՐՏԵՐԸ.— (կը խոնուին դուրս ելլելու. խօսակցութիւն եւ աղմուկ: Տնօրէնը կ'ելլէ):

ՕՐԻՈՐԴ ՍԻՐԱՆՈՅԸ.— (Աստ անո՛ր) Հանդա՛րտ, տղա՛ք, քիչ մը կամաց, մի՛ հրէք իրար... Այդպէս չէ՛ կարելի, սիրելի՛ս... Ո՛հ ո՛չ, բարեկա՛մս, պէտք չէ հրել...

ՕՐԻՈՐԴ ՀԱՅԿԱՆՈՅԸ.— Աղջիկնե՛ր, խնդրեմ պա՛ռանց աղմուկի...

(Դասարանը կը պարպուի, դուռնէն քիչ մըն ալ կը լսուի աշակերտներու աղմուկը, ապա կամաց կամաց կը դադրի):

Դ.

ՕՐԻՈՐԴԵՆՐ ՄԻՐԱՆՈՅԾ ԵՒ ՀԱՅԿԱՆՈՅԾ

ԱՊԱ ԵՒ ՆՈՒԱՐԴ, ՍՈՒՐԷՆ

ՕՐԻՈՐԴ ՀԱՅԿԱՆՈՅԾ.— Ամբողջ ժամ մըն է որ թէ՛ մենք անհանգիստ ենք և թէ տղաքը... Իսկ հիւրը դեռ չերեւար:

ՕՐ. ՄԻՐԱՆՈՅԾ.— Դուքն դադարաւոր ունի՞ս թէ ո՛վ է այդ Միհրանեանը, որու ընդունելութեան համար ո՛չ միայն այսքան սրտատրոփ կ'սպասենք, այլ և դպրոցի մինչեւ յետին անկիւնը մաքրած ենք և հինգ բոպէն անդամ մը նստարաններու փոշին կ'առնենք...

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅԾ.— Կ'ըսեն թէ յայտնի մանկավարժ-հոգեբան է: Դասի ժամանակ կը նստի անկիւն մը և լուռ, ուշադրութեամբ, կը զննէ մանուկներու դէմքերու շարժումները, արտայայտութիւնները և առտով դադարաւոր կը կազմէ այդ ժողովրդեան կազմութեան և յատկութիւններուն վրայ:

ՕՐ. ՄԻՐԱՆՈՅԾ.— Այո՛, տնօրէնն ալ ըսաւ... Իբր թէ այցելած է Թուրքերու թաղային վարժարաններն անդամ... Կ'ըսեն թէ ամէն տեղ կը փնտռէ մի՛ միայն աղքատ, աշխատաւոր դասի թաղերը և անոնց մանուկներու դպրոցին մէջ կը կատարէ իր գիտողութիւնները...

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅԾ.— Խելացի՛ կը գտնեմ այդ ձեռն ուսումնասիրութիւնը... Հարուստ դասի հոգեբանութեան ամէն տեղ նոյնն է...

ՆՈՒԱՐԴ (ճեղք կը վազէ):

ՕՐ. ՄԻՐԱՆ.— (անոր) Ի՞նչ կ'ուզես, Նուարդ, ինչո՞ւ եկար:

ՆՈՒԱՐԴ.— Օրիորդ, ձեր պարոն մը եկած է և պարոն տնօրէնը կ'ուզէ. իսկ տնօրէնը չը կայ:

ՕՐ. ՄԻՐԱՆ.— (Բիչ մը վախցած) Ծեր պարոն մը... Ո՞վ է, ի՞նչ կ'ուզէ... ծառան հոն չէ՞:

ՆՈՒԱՐԴ.— Ծառան չուզեր ներս թողուլ. պարոնը կ'ըսէ թէ պիտի սպասէ տնօրէնի:

ՍՈՒՐԷՆ.— (ճեղք կը վազէ) Օրիորդ, պարոն մը... մեր սպասած հիւրն է, ինքը ըսաւ...

ՕՐ. ՄԻՐԱՆ.— (սարսափած ու շփոթած) Հի՛ւրն է... Տէ՛ր Աստուած... Իսկ տնօրէնն ալ չը կայ:

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅԾ.— Հոգ չէ՛, մի՛ չփոթիր, երթանք մենք ընդունինք: (Կր ֆալեկ դէպի դուռը):

Ե.

ՆՈՅՆՔ ԵՒ ՄԻՀՐԱՆԵԱՆ

ՄԻՀՐԱՆԵԱՆ.— (լաւ հագնւած ծերունի մը, կ'եւայ դրան Եւսեփին) Ներեցէ՛ք... Պարոն տնօրէնը չը կայ... Կարելի՞ է մտնել... Ձեր սպասած հիւրն եմ ես, Միհրանեան. պարոն ընդհանուր տեսուչը, յոյս ունիմ, որ իմացուցած պիտի ըլլայ իմ մասիս...

ՕՐ. ՄԻՐԱՆ.— Անշո՛ւշտ, պարոն, հրամայեցէ՛ք... պարոն տնօրէնը ընդհանուր տեսչին մօտ գնաց... Իսկոյն պիտի գան... Ես վարժուհի եմ այստեղ...

ՄԻՀՐԱՆԵԱՆ.— Ուրախ եմ... Իսկ օրիորդը:

ՕՐ. ՄԻՐԱՆ.— Օրիորդ Հայկանոյշ, վարժուհի լիզուի, իրազննութեան և գծագրութեան:

ՄԻՀՐԱՆԵԱՆ.— Այո՛, լսած եմ: Պարոն ընդհանուր տեսուչը ատանձին գովասանքով խօսած է ինձ ձեր գծագրելու և պատմելու տաղանդի մասին:

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅԾ.— (լուռ՝ կը խոնարհի):

ՕՐ. ՄԻՐԱՆՈՅԾ.— Ձէ՛ք ուզեր արդեօք, պարոն, որ տղաքը ներս առնենք և դասը սկսի:

ՄԻՀՐԱՆԵԱՆ.— Շնորհակալ պիտի ըլլամ, եթէ

միայն ներս առնելը զանոնք չը պիտի զրկէ իրենց խաղալու ժամանակէն:

ՕՐ. ՍԻՐԱՆ.— Ո՛հ, պարոն, արդէն դասի ժամանակ է:

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ.— Դուք ո՞ր դասարանը կ'ուղէք երթալ:

ՄԻՀՐԱՆԵԱՆ.— Այս կեցածս ո՞ր դասարանն է:

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ.— Երկրորդ:

(Այդ միջոցին Օր. Սիրանը կ'ելլէ դուռն եւ կը զանգահարէ: Դուռսէն կը լսուին աղմուկի ձայներ քանի մը վայրկեան, յետոյ օրիորդին ձայնը, ապա կը տեսնուին լուսքիւն):

ՄԻՐԱՆԵԱՆ.— Կը մնամ այստեղ: Շա՞տ են աշակերտները և ի՞նչ տարիք ունին:

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ.— Քսանի չափ են, Տէն մինչև 11 տարեկան: Կէսը գրեթէ աղջիկ է, կէսը մանչ:

ՄԻՀՐԱՆԵԱՆ.— Աղքատ ծնողաց զաւակներ են ամէնքն ալ:

ՕՐ. ՀԱՅԿ.— Ամէնքն ալ բանւորներու զաւակներ են:

(Ներս կուգան կարգով աշակերտները, հետաքրքրութեամբ կը զննեն հիւրը, իրարու հետ կը փոփոսան եւ կը տեղաւորուին):

ՕՐ. ՍԻՐԱՆՈՅՇ.— (Երբ ամենքը կը նստին) Ահա՛, տղաք, պարոնն է մեր սպասած հիւրը, որ կ'ուղէ այսօր ներկայ ըլլալ ձեր դասին...

ՄԻՀՐԱՆԵԱՆ.— (Նախ ժպտուն՝ կը դիտէ ամենքը մէկ մէկ, ապա մի կողմը կը հրաւիրէ Օր. Հայկանոյցը եւ ցած ձայնով անոր բան մը կը բացատրէ վայրկեանի մը չափ):

ՕՐ. ՍԻՐԱՆ.— (Այդ միջոցին աշակերտներուն) Իսկ այժմ լուռ կեղեք, բարեկամներս և լա՛ւ լսեցէք դասաւանդումը... Մ'ո... Հանդարտ եղիք, Սո՛ւրէն... Դուն, Մա՛րիամ, զսպէ քեզի և քիչ խօսէ...

(Խորունկ լուսքիւն կը յաջորդէ)

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ.— (որ լսեւ էր Միհրանեանը, կը ժպտի, գլխովը հաւանութեան նշան կ'ընէ) Լա՛ւ, պարոն, դժուար չէ այդ:

ՄԻՀՐԱՆ.— Նորէ՛ն կը խնդրեմ, օրիորդ, որ կարճ պատմէք և տաք միմիայն ծանօթ, սովորական տեղեկութիւններ:

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ.— Շա՛տ լաւ, պարոն...

(Լուռ է: Կը նայի տղոյն, ետեւի շարքին նստող կ'ընէ լսելու, ապա կ'առնէ կաշիքը եւ կը մօտենայ գրասխակին)... Տղա՛ք, ես կ'ուզեմ ձեզ համար այսօր բան մը գծել և գծելով ալ պատմել... եթէ, ի հարկէ, լուռ մնաք և հանգիստ:

ՀԱՅԵՆԵՐ.— (ուրախ եւ ոգեւորւած) Օ՛հ, այո՛, օրիորդ, բոլորովին հանդարտ... Ահա՛, ո՛չ մի ձայն... Շունչներնի՛ս կը պահենք...

(Կը գետնուրէն եւ կը պատրաստուին նստելու ու լսելու):

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ.— Ահա՛ ուրեմն, կը սկսիմ... (Կը սկսի մէկ կողմէն նկարել գրասխակի վրայ եւ միւս կողմէն պատմել) Ահա ձեզ խիստ ծանօթ պատկեր մը... հեռուն ծառեր, դեռակ... Ապա, ընդարձակ, ծաղկալից մարգագետին, որ կ'երթայ կը հասնի անտառներով ծածկուած բարձր լեռներու... Նայեցէք այժմ վեր... Օղին մէջ կ'երեւին ձախրող թռչուններ... ծիծեռնակներ են... Կը ծլուրջան, կը սրանան աջ ու ձախ... և սարեկներ կան... բոյն կը շինեն, ձաղուկներ պիտի հանեն... Գարո՛ւնն է եկեր...

ԿԱՐԱՊԵՏ.— (կը շարունակէ երգի կտորը)... «Նախշուն թռչունով, կարմիր վարդերով»...

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ.— (Կը նայի անոր եւ կը ժպտի) Այո՛... բոյց վարդերը աւելի՛ ուշ, մայիսին... Առ այժմ ապրիլի մէջն ենք... ծաղիկներ, լաւ խո՞տ... Այժմ դէպ ալ նայինք... փարախն է, որ կ'իստովին

գետնի մէջ է շինուած. ոչխարներու գիշերուան բնակարանն է... Դրան առջեւ դրուած է կոճղ ու վրան նըստած է... հովիւ մը... տեսէ՛ք, մկրատ մըն ալ ունի ձեռքը, լայն ու խոշոր մկրատ... կը գուշակէ՛ք արդեօք, թէ ի՞նչ կ'ուզէ ընել... Չէ՞ր կարող գուշակել... Սպասեցէ՛ք քիչ մը... նայեցէ՛ք այժմ և տեսէ՛ք... ի՞նչ է այս հովուին քովը... Գլուխ մը, ոտներ...

ԱՄԷՆՔԸ.— Ո՛չխար է... բուրդոտ ոչխար մը...

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅԾ.— Այո՛, ոչխարն է... Հիմա երեւի, գուշակեցիք մկրատին գործը... Չմեռը անցած է, ոչխարը տաքցեր է այլ եւս... պէտք է վրայէն հանել տաք հագուստը... Եւ գիտէ՛ք արդէն, թէ մարդիկ ի՛նչեր կը շինեն ոչխարի բուրդէն...

ԱՄԷՆ ԿՈՂՄԷՆ.— Հագուստ... Անկողին... Գրակ...

ԿԱՐԱՊԵՏ.— Իմ հագուստս բուրդէ է:

ԱՐԱՄ.— Իմա ալ...

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅԾ.— Անշուշտ գիտէ՛ք նաև թէ ոչխարը մեղի միայն բուրդը չէ որ կուտայ... Ո՛չ, այդ հեղ, սիրուն և լաւ կենդանին մեղի կուտայ... ի՞նչ, ո՞վ գիտէ...

(Այս խօսակցութեան քննադէպն ան միշտ կը նկատուի կը լրացնէ նկարը լայն շարժումներով եւ մեկ կողմէն ալ կը շարժուի):

ԱՄԷՆ ԿՈՂՄԷՆ.— Կա՛թ... Մածո՛ւն... Սե՛ր...

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅԾ.— Այո՛, կաթ, մածուն, սեր... Ինչպէս և պանիր. ոչխարի կաթէ՛ն ալ աղէկ պանիր կը շինեն... Իսկ գիտէ՛ք արդեօք թէ ինչո՞ւ ոչխարը կաթ կ'ուտենայ և ո՛ր ժամանակ... Ո՛հա նայեցէ՛ք, ոչխարին քովը... ի՞նչ կը տեսնէք:

ԱՄԷՆՔԸ.— Գառնուկն է...

ՆՈՒԱՐԴ.— Օ՛հ, որքա՛ն լաւ է...

ՎԱՐԴՈՒՀԻ.— (Ձեռքեր իրար զարնելով) Օ՛հ, անուշիկ գառնուկ... ձերմա՛կ, սիրունի՛կ...

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅԾ.— Այո՛... Հա՛տ սիրուն ու անմեղ գառնուկ մըն է գողտրիկ գունջով... մայել ալ գիտէ... Գիտէ՛ նաև շատ գուարճալի կերպով ցատկոտել... Տեսէ՛ք ինչպէ՛ս խոտի շիւղ մըն ալ բերանը, ծամել չի կրնար... Զարմացած՝ մօրը կը նայի և չը կրնար հասկնալ, թէ ի՞նչ կ'ընեն մօրը, ի՞նչու մաշդերը կը խուզեն և խոշոր մկրատը չըրախկնալու կը պտտի կենդանիին կոնակին վրայ... Մի՛ վախնար, սիրո՛ւն գառնուկ... Մայրիկիդ տաք հագուստն է միայն որ կը հանեն... Ալ ցուրտ չէ, հիմա արեւը պայծառ կը փայլի, ձիւները հալած են, ծաղիկնե՛ր կը ժպտին ամէն կողմէն... Այդպէս, գառնուկ, մայրդ զովանալու կարիքն ունի... Եկող տարի քեզի ալ այդպէս պիտի ընեն... Տեսէ՛ք, տղաք, աւելի սիրուն չէ՞ այժմ մեր ձերմակ գառնուկը... Չէի՞ք կամենար, զո՛ւն օրինակ, Նուարդ և կամ զո՛ւն, Վահ՛ան չէի՞ք կամենար անգամ մը համբուրել անոր գնչիկը...

ՆՈՒԱՐԴ.— Օ՛հ, այո՛, օրիորդ, թողէ՛ք գամ համբուրեմ:

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅԾ.— Ո՛չ, սպասեցէ՛ք դեռ...

ԿԱՐԱՊԵՏ.— Ես ալ համբուրեմ:

ԱՄԷՆ ԿՈՂՄԷՆ.— Մե՛նք ալ... Ե՛ս ալ... Ե՛ս ալ...

ՄԱՐԻԱՄ.— Օրիո՛րդ, որ թողնէ՛ք, ամբողջ օրը թեւերուս վրայ կ'առնեմ գառնուկը:

ՎԱՐԴՈՒՀԻ.— Օրիո՛րդ, մայրս ինծի շատ լաւ ժապաւէն մը նուիրած է... Վարդագոյն ժապաւէն... Հրաման տւէ՛ք որ գառնուկին վզին կապեմ:

ԿԱՐԱՊԵՏ.— Ամենափափուկ խոտերու տե՛ղը գիտեմ ես, օրիորդ...

ԱՐԱՄ.— Է՛հ, խոտն ինչ է որ, խոտ ե՛ս ալ կըրնամ բերել:

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ.— (Որ գրեթե լրացուցած է
 ցկարը, յանկարծ կը դառնայ դեպի առակեցեցերը:
 Մասը վերցուցած, դիմքը խիստ, սառն եւ գրեթե դաժան:
 Ամենքը կը դադարին ժպտելէ, հետզհետեւ նախ կը զար-
 մանան, ապա վախ կ'երեւնայ դիմքերու վրայ) ... Իսկ
 այժմ, տղաք, ահա թէ ի՛նչ պիտի յայտնեմ ձեզ...
 Ինչպէս գիտէք, ապրելու համար պէտք է ուտել...
 Իսկ կենդանիներու միւր համով է եւ լաւ սնունդ...
 Ամէնքդ անշուշտ կը սիրէք թէ՛ խաշած եւ թէ՛ խորո-
 ված՝ դալար գառնուկի միւր գետնախնձորով... Ու-
 րախոսութեամբ պիտի ուտէիք ալ այժմ, որովհետեւ ա-
 նօթեցած էք... աղէկ ուրեմն. քանի որ աշխարհիս
 կարգն այնպէս է եւ մարդիկ պէտք է կենդանիներու
 միտով կերակրուին, մեզ կը մնայ ի՛նչ ընել...

(Կ'իջնէ, սեղանի վրայ դրուած քանակը ձեռք
 կ'առնէ) ... Մեզի կը մնայ ձեռքերնիս առնել դանակ
 մը եւ... մորթել մեր գառնուկը...

(Խորունկ լռութիւն).

...Ուրեմն, այժմ մենք կ'ուզենք մորթել գառ-
 նուկը... Իա՛ւ, պատրաստութիւն տեսնենք... (Կը
 սկսի նոռէն ցկարել) Ահա փայտ մը՝ դրուած այս երկու
 ծառի ճիւղերուն... Ահա եւ կեռը, որմէ պիտի կախ-
 ւի մորթուած գառնուկը՝ քերթուելու համար... Ահա
 եւ կոճղ մը, որու վրայ պիտի կտրուի գառնուկի գլու-
 իսը եւ մարմինն ալ կտոր կտոր պիտի ըլլայ...

2.

ՆՈՅՆՔ ԵՒ ԾԱՌԱՆ

ԾԱՌԱՆ.— (Դրան վրայ կ'երեւի) Օրի՛որդ...

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ.— (Կ'ընդհատէ) Ի՛նչ կայ, ի՛նչ
 է եղեր:

ՕՐ. ՄԻՐԱՆՈՅՇ.— (Կ'երթայ դեպի ծառան եւ
 նեղացած) Ինչո՞ւ կը խանգարես:

ԾԱՌԱՆ.— Բայց օրիորդ, եկած են պարոն ընդ-
 հանուր տեսուչը, պարոն տնօրէնը, եւ կը խնդրեն...

ՄԻՐԱՆՈՅՇ.— (ոտի կ'ելլէ) Անշուշտ... պէտք
 է ներկայանալ նախ տնօրէնին... Լա՛ւ ուրեմն, օրի-
 որդնե՛ր, երթանք առ այժմ... Յե՛տոյ, պարոն տե-
 սուչներուն հետ կը վերադառնանք եւ կը մորթենք
 գառնուկը... Այնպէս չէ՞... (Կը ժպտի եւ կը փայլ
 դեպի դուռը: Կը հետեւին վարժունիները: Առանց ե-
 տելին նայելու, ամենքն ալ դուրս կ'ելլեն):

է.

ՄԻԱՅՆ ԱՇՍԿԵՐՏՆԵՐԸ

(Վայրկեան մը բացարձակ լռութիւն է: Ոչ ոք տե-
 դէն կը շարժի. ամենքին աչքը նախ գրաստիսակին կ'ուղ-
 դուի, ապա եւ իրարու):

ՍՈՒՐԷՆ.— (Կ'ոտնու, տեղէն կ'ելլայ եւ կը դառ-
 նայ ամենքին) Ինչպէ՛ս, պիտի վերադառնան եւ մոր-
 թեն գառնուկը... Եւ մենք պիտի թոյլատրենք որ
 կատարւի այդ չարագործութիւնը...

ՄԱՐԻԱՄ.— Օ՛հ իմ խեղճ ձերմակ գառնուկս...

ՆՈՒԱՐԴ.— (լացի ձայնով) Թողու՛ր որ գլուխը կըտ-
 րեն, մարմինը յօշոտեն...

ԿԱՐԱՊԵՏ.— Չը թողո՛ւնք, տղա՛ք, չը թո-
 դո՛ւնք որ գառնուկը մորթեն:

ՁԱՅՆԵՐ.— Չը թողո՛ւնք... կռուի՛ ելնենք...
 Դիմադրենք...

ՍՈՒՐԷՆ.— Յառաջ ուրեմն, ընկերնե՛ր, պաշտ-
 պանենք անմեղ զոհը...

ԿԱՐԱՊԵՏ.— Ձիւղու՛նք... Ես այս քանակը
 կ'առնեմ:

ԱՐԱՄ.— Ես...



ՆՈՒԱՐԴ.— Ես դառնուկին դէմը կը կենամ և դա-
նակի հարուածը առաջ թող ի՛մ վրայ իջնայ:

ՄԱՐԻԱՄ.— Ես գրքե՛րս կը նետեմ մորթողներու
գլխին: Ըլլա՛յ ան օրիորդը կամ նոյն իսկ տնօրէնը:

ԱՄԷՆՔԸ.— Ձե՛նք թողուր որ մորթեն... Ձե՛նք
թողուր որ սպաննեն...

ՍՈՒՐԷՆ.— Տղա՛ք, եկէք պատնէշով պաշտպա-
նենք դառնուկը:

ԶԱՅՆԵՐ.— Այո՛, այո՛, պատնէ՛շ... պատնէ՛շ
չինենք... պատնէ՛շ, պատնէ՛շ...

(Դուռս կ'ելլան նստարաններէն խառն ի խառն,
խօսակցութիւն, իրարանցում...):

ԿԱՐԱՊԵՏ.— Ինչո՞վ սակայն, ի՞նչպէս չինենք
պատնէշը, տղա՛ք:

ԶԱՅՆԵՐ.— Նստարաններով... սեղանով...

ՍՈՒՐԷՆ.— Այո՛, սեղանը, օրիորդին սեղանը...
Հեռու կեցէք մէջ մը... Դէ՛, բռնեցէ՛ք... Այս կող-
մը... Քաշեցէ՛ք...

ԶԱՅՆԵՐ.— Է՛, զգո՛յշ, ոտքերնուդ վրան չիյ-
նայ... (սեղանը կը պառկեցնեն) Դէ՛, քաշեցէ՛ք այժմ...
Քիչ մը հեռու կեցէք... Քիչ մը առաջ դարձուցէք...

ԱՐԱՄ.— Դարձուցէք... քիչ մըն ալ այս կողմը...

ՍՈՒՐԷՆ.— Նստարաններն ալ բերենք ու երկու
կողքերը գոցենք... Շո՛ւտ, կուգան հիմա...

ԶԱՅՆԵՐ.— Իրարու վրայ հանենք... Հրեցէ՛ք...
Քաշեցէ՛ք... մի՛ պօռաք, ծօ՛, քաշէ՛ք...

(Աղմուկի մէջ՝ սեղանը կը փռեն գրասխակիւն
առաջ, կը դարձնեն կողքի՝ ոտները դէպի դուռ. գրա-
սեղանները կը օտրեն երկու ֆովեր, իրարու վրայ եւ
ամենքն ալ կը խոնովին պատնէքին ետեւը, ձախ ու աջ
կողմերը):

ԱՐԱՄ.— Ես պատնէշին վրայ կ'ելլամ... Դրօշա՛կ
ալ չինենք... Վահ՛ան, քանակը ինծի տուր... Ահա

և թաշկինակ... (Կը կապէ գրպանէն հանած գունա-
ւոր քակիկնակ մը եւ դօռ կը շինէ) Կեցցէ՛... Այժմ
թող դան... (սպառնալից) մենք չենք թողուր որ
մորթեն դառնուկը...

ԶԱՅՆԵՐ.— Պատնէշին շուրջը, տղա՛ք... Ետեւը
լաւ է... Քովերն ալ բռնեցէք...

ՆՈՒԱՐԴ.— Թողէք, ես դուրսը կայնիմ:

ՍՈՒՐԷՆ.— Ո՛չ ոք պատնէշի առջեւ... Այստեղ
միայն զօրավարի տեղն է:

ԿԱՐԱՊԵՏ.— Ես կ'ըլլամ զօրավարը:

ՍՈՒՐԷՆ.— Դուռն ի՞նչ զօրավար ես որ... Է՛յ,
տղա՛ք, ո՞վ կ'ընտրէք ձեր զօրավարը:

ԶԱՅՆԵՐ.— Քեզի... Սուրէն... Սուրէնը թող
ըլլայ...

ԿԱՐԱՊԵՏ.— Լաւ ուրեմն, դո՛ւն եզիր:

ՍՈՒՐԷՆ.— Այդպէս... Ես կ'ապացուցանեմ
որ զիտեմ կուրծք տալ, կուրիլ ամենաառաջին շարքի
մէջ և իյնալ պատնէշի վրայ...

(Կ'անցնի սեղանին առաջ՝ քիկունքը պատնէքին)
Եւ այժմ, ընկերներ, պատրաստ կենանք, պաշտպանե-
լու համար դառնուկը...

ԶԱՅՆԵՐ.— Պատրաստ ենք...

ՈՄԱՆՔ.— (Կը սկսին մառս մը երգել):

ԱՐԱՄ.— (Կ'ընդհատէ) Է՛յ, լուռ կեցէք դեռ,
դուցէ կուրի պէտք չըլլայ. դուցէ բանակցինք և խա-
ղաղ կերպով յաղթենք:

ՆՈՒԱՐԴ.— Ինչ որ ալ ըլլայ, չը թողունք որ
շղջին դառնուկին...

Ը.

ՆՈՅՆՔ, ՄԻՀՐԱՆԵԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒՉԸ,
ՏՆՕՐԷՆԸ ԵՒ ԵՐԿՈՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԸ

(Ամենքը ներս կը մտնեն եւ զարմացած կանգ կ'առնեն: Անոնց մտնելը տեսելուն պէս՝ առակերտները մնալով իրենց դիրքերուն վրայ, կը լռեն: Կը տեսնեն վայրկեան մը խորունկ լուսնիւն):

ՍՈՒՐԴ. (Գլուխը բարձր, ձեռքը գցած եւ պատշաճաբան կոչի ձայնով) Մենք չե՛նք թողուր որ մորթէք գառնուկը...

ԱՐԱՄ. (դուրսէն գոռոցէն եւ պատշաճաբան կոչի մը մեր յետին կաթիլ արիւնը կը կոտորէր անոր պաշտպանութեան համար...)

ԱՄԷՆԲԸ. Ձե՛նք թողուր... մի՛ մորթէք գառնուկը...

ՏՆՈՐԷՆ. (կ'ուզէ մօտ երթալ) Այս ի՞նչ է, այս ի՞նչ խայտառակութիւն է...

ԸՆԴԶ. ՏԵՍՈՒՉԸ.— Վա՛ր իջէք... ի՞նչ անկարգ տղաներ էք...

ՄԻՀՐԱՆԵԱՆ. (կը նետուի առաջ եւ կ'արգիլէ տեսչները՝ աւելի մօտ երթալ) Ո՛չ, խնդրեմ, կանգ առէք վայրկեան մը եւ թողէք ինձ դիտելու եւ հասկնալու, թէ ի՞նչ է այս ամէնը, ինչո՞ւ այդ պատճառով, ի՞նչ կ'ուզեն այդ փոքրիկները...

(Ամենքը կանգ կ'առնեն խոր լուսնիւն է: Միմեաներէն դիտելով միմեանի պատշաճաբանը կը սկսի ժխտելու նորեկը)

ՁԱՆԵՐ. (խառն ի խառն) Ձե՛նք թողուր... մի՛ սպաննէք գառնուկը... խղճացէ՛ք, պարո՛ն...

ՄԱՐԻԱՄ. Ես չեմ թողուր որ անոր արիւնը թափէք:

ՆԱՍՐԴ. Կ'անիծենք ձեզ, եթէ դպչիք գառնուկին:

ՄԻՀՐԱՆԵԱՆ. Այ՛... այդպէ՞ս ուրեմն... Կը նշանակէ որ այս ամբողջ փոքրիկ ժողովուրդը մէկ

մարդու պէս ոտքի է ելեր, թոյլ զո՛ւր պաշտպանելու համար...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ.— Օ՛հ, պա՛րոն, մի՛թէ դուք զաւակներ չունի՞ք... նայեցէ՛ք, որքա՛ն անմեղ է նա, այդ փոքրիկ արարածը... (կը սկսի լալ)

ՆՈՒԱՐԴ.— (լալով եւ կասողի) Ո՛չ, ես ամէն ինչ կ'ընեմ, միայն չե՛մ թողուր որ դպչիք անոր...

ՍՈՒՐԷՆ.— Տղա՛ք, կու՛նի՛ պատրաստեցէ՛ք...

ԱՄԷՆԲԸ.— Ձե՛նք թողուր, կը դիմադրենք... հետեւ կեցէ՛ք...

ՄԻՀՐԱՆԵԱՆ.— (Առաջ կ'երթայ քիչ մըն ալ, կանգ կ'առնէ, կը նայի ամենաւ լարուած դեմքերուն: Տիրող լուսնեան մէջ լացկարծ կը բարձրացնէ իր գլխարկը, կը ցնցէ օդին մէջ եւ յուզուած կը գոչէ) Թո՛ղ չը մորթուի ուրեմն գառնուկը, որ այսպիսի հերոս պաշտպաններ ունի եւ թող կեցցե՛ն մեծահոգի այս մանուկները...

ԱՄԷՆԲԸ.— (Առակերտները իսկոյն վար կը նետուին պատշաճաբան, դուրս կ'ելլան, կը սկսին նստաւանդներ իջեցնել եւ ճիշդ, աղաղակ ու զուարթ կանչեր կը լսուին) Հուսո՛ւ... գառնուկը չը պիտի մորթուի... կեցցէ՛ք գառնուկը... կեցցէ՛ք եւ մեր հիւրը...

ՍՈՒՐԷՆ.— Տղա՛ք, քանդեցէ՛ք պատնէշը, այլեւս ան մեղ պէտք չէ:

ԱՐԱՄ.— Ոչ ալ այս դռնը (կը նետ դուրսէն):

ՆՈՒԱՐԴ.— (Կը վազէ եւ կը գրկէ օրհորդներ) Օ՛հ, որքա՛ն ազէկ ու բարի էք, օրհորդ...

(Աղջիկները կը օգնականները վարժուողները, տղաները, տեսչները եւ հիւրը: Միմեաներէն հանդիսաւորապէս նայալով սեղմեալ Սուրհան, դուրսէն, ապա եւ միւսներու ձեռքերը: Ուրախ կանչ, բռնիչ, ապա եւ կը սկսի մարտը եւ վարագոյրը կ'իջնէ այդ աղմուկին մէջ:





ՀՀ Ազգային գրադարան



NL0402792

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

	Ղ. Բ. Ե.
Ակնցի Հաճի Աղան	Յ. Յ. Ամիրանց 40
Արչին Մալ Ալան	15
» » » Հայառաւ Թուրքերէն	25
Անուշ	25
Անձնուէր Բնկերը	50
Լէպլէպլի	30
Շատախոս Սափրիչը	15
Ասիացի Սափրիչը	Յ Պապէսեան 10
Ամերիկահայ Փետացուն կամ Տայը կարապետ	25
Բարեկենդանի Անկուտարները	15
Դղումի Վաճառականը	15
Երանոս Աղբար	Տ. Փափազեան 25
Երկու Խուլեր	Մօլիէր 15
Թիք Թաք	10
Կրլ Սքառւթ կամ Մատս Մէջն է	Ե. Թօլահան 50
Մարիամ Մագթաղեհացի	Լ. Ծիծաղ 50
Սատանայ	10
Սիքլօք	10
Գողը	Տ. Միրբօ 15
Հնարամիտ Վարձակալը	10
48 Օխանոց գլխու փորձանքը	20
Վիբի ճաշարանին սպասաւորը	15
Գործարանին Երկրաչափը	15
Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Գրատունը կը հայկալթէ Դըպ- րոցական, Վիպական, Թատերական, Պատմական, Բա- նաստեղծական ամէն տեսակ Հայերէն գիրքեր հային, և այլն :	

Հասցէ՝

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի, Բէշիա էֆ. խան

Գին 15 ՂՐՇ